Մարութայ բանձր Աստուածածին, խաչն պատարագին վեր ոչ թևին․ զարկեց պօղպատ, սուն բոլուն կարեց, որ կտոր կտորն վէրէն մնաց։ Ինքն կարծեց որ չկարեց։ Ինոր խամար յուսահատեցաւ, գլինք անխձեց ու կատացաւ։ Նորէն յիշեց Տէրն Կենդանին, Ծովասարի կողմի քամին էկաւ, կտրած սուն որ շըջեց. տառձաւ գլինքն օխնեց, բժշկուաւ։

120. Պրն Պռօշ, պըն Բղէք Յռընտայ տէւէր էն տեխէն էկան տեսան, որ Տուխթ նստե Քարէկալ։—Ասին, Տուխթ, Կապոտ Կողա Թագաւորու մարդ տի՞ւ ես։—Խա, ասաց։—Ասին տէ էրթանք տաշտ կռվենք։—Տուխթն ասաց․ մենք պիտի կռվենք․ տաշտ չեմ էրթայ։—Ինոնք էլ հաւնեցան ու ասին, ի՞նչխ պիտի կռվենք։—Տուխթն ասաց կխուռզով․ Տեաշ տիւ ձիկ զար իրեք կխուռզ, թէ որ սպանեցիր, իմ արին քե խալալ էլնի․ թէ չէ, իրեք կխուռզ էլ ես քե զարնեմ։

121. Բարան Պռօծ գնաց չուռ Հալապ՝ երիշ քեաշեց էկաւ մէկ կխուռզ զարկաւ Տուխթին, թօզ տուման էլաւ։ Տէւն ասաց․ «Տուխթ, խող ես, խող տառձիր»։ Տառձաւ տէսաւ, որ սաղ կէօ կայներ ի Տուխթ. Նորէն ասաց, «Տուխթ, կայնիր կաց տէօրխ շատ պիտի զատանամ զատանամ»։ Գնաց չուռ Պաղտատ, Պասըրայ երիշ քաշեց[1] էկաւ, կխուռզ մը էլ զարկեց Տուխթի վզին, վիզ քէթրվաւ[2], Տուխթ ուր վիզ ուր ձեռնով շիտկեց, կայնաւ։ Տարձաւ ասաց Տուխթին․ «Ըստրիս[3] պիտի էլնեմ խետ էրկնուց զարնեմ չուռ անտխնտկ իջնես․․ պատրաստ կաց»։ Տէւն էլաւ խէտ էրկնուց, Տուխթն էլ ուր մըրխին աղու քսեց՝ անկեց ուր ճակտի տէմ կայնաւ։ Տէւ էրկնուց իջաւ, որ պիտի զարնէր, ինկաւ վեր Տուխթի մըրղի ծէրին, որտից ծակուաւ, քեամկից էլաւ տիւրս՝ լէշն իջաւ վեր Տուխթի ձեռաց ինչպէս սար մը։

122. Տուխթի ձեռք իրեք օր մնաց լէշին տակը, չկարցաւ ուր տիւրս խանել, քինչի մռցաւ ուր տէրն յիշել։ Էն սհաթին Ջէնով Յովան տէսաւ, որ Տուխթի սաղ նվաղեր էր, թռաւ սև լայեղ ձիու քեամակ, որ աչք խփոց խասաւ Տուխթի մօտ, բայց ճամխու վերէն Տուխթի կապած իրեք մարտեր ու տէսաւ, սուր պռտեց ինոնց վէրէն, տըօրեց․ սօրայ խասաւ մօտ Տուխթ։ Ասաց․ «Տուխթ, էտ ինչ հալն ես ինկե»։—Ասաց․ էս իրեք օր ի, որ ձեռքս մնացե լէշին տակ, չեմ կրնայ խանե տիւրս։—Ասաց զայի[4] քըռյ տէր մռցեր ես։ Ասելուն պէս՝ Տուխթն ասաց․

«Յիշամ քե Տէրն կենդանին,
Մարութայ բանձր Աստուածածին,

---

1 Թափառել, թափ տանել․ 2 Ծռուել։ 5 Այս անգամ․
4 Զանար, դուցէ։